



Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 31 մարտի 2025թ. թիվ 6 (610)

ԿԱՅԱՑԱՎ ԳԵՂԱՐՔՈՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Մարտի 28-ին կայացավ Գեղարքունիքի մարզի խորհրդի հերթական նիստը, որը վարեց Գեղարքունիքի մարզպետ, մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը:

Նիստին մասնակցեցին մարզխորհրդի անդամները եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները:

Օրակարգում քննարկվեց վեց հարց:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական, գյուղատնտեսության, քաղաքաշինության, կրթության, մշակույթի եւ սպորտի, առողջապահության եւ սոցիալական հարցերի, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի ոլորտների պատասխանատուները զեկուցեցին 2024 թվականի տարեկան եւ 2025 թվականի առաջին եռամսյակի աշխատանքային հաջողությունների եւ ձեռքբերումների, ինչպես նաեւ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մասին:

Քննարկումներ ծավալվեցին 2025 թվականի մարտի 1-ի դրությամբ համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների, զարման գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գյուղօլորտում պետական աջակցության ծրագրերի իրագրեկման, նախորդ տարիներից 2024 թվական տեղափոխված եւ 2025 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, կրթական ու առողջապահական հիմնարկներում իրականացվող ծրագրերի ու բարեփոխումների, մարզի համայնքներում ազդարարման միասնական համակարգի ստեղծման, զարմանային վարարումների ռիսկերի նվազեցման, աղբահանության վարձավճարների գանձման հետ կապված հարցերի շուրջ:



Ամփոփելով նիստի աշխատանքները Գեղարքունիքի մարզպետ, մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը հանձնարարեց՝ շարունակել հետեղողական ու համագործակցված աշխատանքը՝ լուծում գտնելով առաջնահերթ ու հրատապ լուծում պահանջող կամ ի հայտ եկած բոլոր հիմնահարցերի համար:

Երկրորդ եռամսյակի մեկնարկից բոլորիս սպասվում է ավելի լարված ու ջանադիր աշխատանք կապված զարմանանացանի, ճանապարհաշինության, սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերով նախատեսված շինարարական աշխատանքների մեկնարկի, այլ ոլորտներում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների կարգավորման հետ: Վստահ եմ, որ մենք համատեղ ջանքերով կկարողանանք հաղթահարել բոլոր դժվարությունները եւ շարժվել առաջ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ԱՄՏՂԱԾՆՈՒՆԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Նվիրում եմ Արցախյան գոյամարտի սրբացած հերոս հայորդիներին

Աշխարհի ցավոտ հոգին է լալիս
Իմ սարսափահար աչքերի խորքից,
Արցունքներ հեղում արնոտված հողիս,
Հատ-հատ տապանում զոհերին անբիծ:
Իմ սարսափահար աչքերի խորքից
Արտացոլվում է խոշտանգված երագ,
Ձնջված հայրենիք՝ վեհ, ազատաբաղձ,
Մի եղենական, ծաղկաբույր պարտեզ:
Արցունք է հեղվում արնոտված հողիս,
Եղերաբորի, գեհեհի հովտից,
Ճիվաղն է անցնում՝ մարմնով բոցակեզ,
Կյանքն է մոխրանում հրե մողկանքից:
Ստոր տապանված զոհերը անբիծ՝
Անմեղ նահատակ կամ անպարտ հերոս,
Փայլատակում են հեռու աստղերից,
Բանակվում որպես ահեղ Նեմեսիս...
Փայլատակում են հեռու աստղերից,
Հայրենի կանչով լույս աշխարհ գալիս,
Որքան էլ հատեն մեզ մեր արմատից
Չարները Բելի՝ արմապիղծ, տհաս:

Խոսքով Խաչատրյան

ԱՐԾՎԱՆԻՍՏՈՒՄ ՊԱՆՈՒՄԻՆԻ ՎԻՄԱԳԻՐ ՄԱՆՄԱՆԱԽԱԶՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՄՏԱԳԻՐ Է

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղը, որտեղ մարդկային կյանքը սկիզբ է առել հնագույն ժամանակներից, հարուստ է պատմաճարտարապետական հուշանշաններով, որոնք պահպանվել ու մեզ են հասել վաղբրոնզեդարյան 1 ամրոցի, 4 դամբարանադաշտերի, 5 հին բնակատեղիների, միջնադարյան 8 գերեզմանոցների, 7 եկեղեցիների, 2 մատուռների, 104 խաչքար-տապանաքարերի տեսքով:

Արծվանիստ գյուղը հյուսիսային կողմից սահմանակից է Սեւանա լճին, արեւմուտքից՝ Մարտունի համայնքի Ծովինար, արեւելքից՝ Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղերին, հարավից՝ Վարդենիսի լեռնաշղթայի մի հատվածին:

Արծվանիստ-Ծովինար սահմանաբաժանում է գտնվում Ուրարտուի արքա Ռուսա Առաջինի թողած սեպագիր արձանագրությունը՝ տարածքի նվաճման ու թեյշեբա ամրոցի կառուցման մասին, իսկ դիմացի հարավային լեռնալանջի վրա էլ տարածվում են թեյշեբա կամ Օծաբերդ ամրոցի ավերակները, որտեղ հայ ու արտասահմանցի հնագետների կողմից կատարվել են հնագիտական լրջագույն ուսումնասիրություններ:

Պահպանված կամ կիսավեր եկեղեցիներից առավել հայտնի են Վանեվան պատմաճարտարապետական համալիրը եւ Սուրբ Դեմիսիմոն եկեղեցին:

Ըստ միջնադարյան հայնշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի, ինչպես նաեւ Վանեվանի գմբեթի հյուսիսարեւմտյան եւ արեւմտյան պատերին պահպանված արձանագրության, եկեղեցին կառուցվել է 903 թվականին, հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու մեկենասությամբ: Այստեղ է թաղված հայոց արքա Սմբատ Առաջինը, ով սպանվել է արաբ ռաշիդյանի ձեռամբ: Վանեվանում գործել է դպրանոց:

Հարունակությունը էջ 3-ում/

ՄԱՆՈՅԻ ՎԱՆԻՆ ՈՒ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ

Արարատի ծեր կատարին
Դար է եկել վայրկյանի պես
Ու անցել...

Ավետիք Իսահակյան

Սալոյի վանքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական տարածքում, Արծվաքար թաղամասից 4 կիլոմետր հեռու, հյուսիսարեւելյան հատվածում, Սեւանա լճի արեւմտյան ափին շատ մոտիկ բարձունքի վրա, Սեւան-Մարտունի-Վարդենիս ավտոմայրուղու հարեւանությամբ: Բարձունքն այնքան ուղղահայաց է ու ժայռապատ, որ սովորական աչքով դժվար է գանազանել փոքրիկ եկեղեցու գոյությունը այլ շինությունից, իսկ եկեղեցուց արեւմուտք, հյուսիս ու հարավ փռված բնակատեղիի ավերակներն առհասարակ քողարկված են մայրուղով անցնող ուղեւորների տեսադաշտից:


Ագարակ կոչված հնավայրի ու Սալոյի վանքի բարձունքից, ինչպես ափից մեջ, երեւում է Սեւանա լճի գրեթե ողջ հայելին, լիճը գոտեւորող լեռնաշթանները հարավից, արեւելքից, արեւմուտքից ու հյուսիսից, նաեւ հնավայր բերող ճանապարհները, որոնք այստեղ են հատվել բոլոր կողմերից:

Ու այս վայրը ոչ միայն կարելի է կոչել «Թանգարան բաց երկնքի տակ», այլ նաեւ բացառիկ ու գաղտնախորհուրդ հնավայր, որտեղ հազարամյակներ շարունակ եռացել ու հոսել է մարդկային կյանքը՝ ընդհատվելով միայն 18-րդ դարի սկզբներին, երբ հայության վերջին բեկորները Սեւանի հայկական սրբազան ավազանից հալածվել ու բռնի տեղահանվել են մահմեդական ցեղերի աշխարհավեր ու չընդմիջվող արշավանքների արդյունքում:

Սալոյի վանքը սրբատաշ քարերով շինված մի փոքրիկ շինություն, գտնվում է Ագարակ կոչվող գյուղատեղիի արեւելյան եզրին, բարձունքի կատարին: Մուտքը բացվում է արեւմտյան կողմից: Եկեղեցու մուտքի մոտ կան մի քանի հղկված ու մեծ տապանաքարեր, իսկ ձախ ու աջ կողմերում, պատվանդանների վրա եւ կողք-կողքի, կանգնած են գեղաբանդակ ութ խաչքարեր:

/Հարունակությունը՝ էջ 5-ում/





2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ Գեղարքունիքի մարզում հայտարարված թատերական երկամսյակի շրջանակներում մարզի կին հանդիսատեսները դիտել են երկրորդ ներկայացումը:

Գեղարքունիքի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում հանդես են եկել երեւանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասանները՝ «Կնոջս անունը Մորիս է» ներկայացման բեմադրությամբ, որի ռեժիսորը Հակոբ Ղազանջյանն է:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից, ներկայացումը դիտելու նպատակով, հրավիրվել էին Գեղարքունիքի մարզի առողջապահական հիմնարկների եւ ուժային կառույցների կին աշխատակիցներ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, մարզի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ:

Թատերական երկամսյակի շրջա-



նակներում Գավառի Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնում կազմակերպվել է նաեւ երրորդ ներկայացումը, որը դիտելու են հրավիրվել կրտսեր հանդիսատեսները:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՄՍՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Թատրոնի բեմում հյուրախաղով հանդես են եկել երեւանի խամաճիկների թատրոնի դերասանները՝ «Փոքրիկն ու Կառլսոնը» մանկական բեմադրության ներկայացմամբ, որի ռեժիսորն Աննա Էլբակյանն է:

Թատրոն են այցելել Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքների հանրակրթական հաստատությունների աշակերտները, որոնց ուղեկցել են մանկավարժներ եւ ծնողներ:

Փոքրիկներին մեծ հիացմունք են

պատճառել բեմադրության հերոսները, իսկ վերջում նրանք միասին լուսանկարվել են:

Թատերական երկամսյակի հերթական հյուրը երեւանի Մնջախաղի թատրոնն էր՝ «Դեպի ներս» բեմադրության ներկայացմամբ, ռեժիսոր՝ Նաիրա Եդիգարյան:

Բեմադրությունը դիտել են Գեղարքունիքի մարզի հանրակրթական հաստատությունների աշակերտները, որոնց ուղեկցել են մանկավարժներ, կրթամշակութային այլ հաստատությունների ներկայացուցիչներ, քաղաքացիներ:

Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ արդեն 3-րդ տարին անցկացվող թատերական երկամսյակի ընթացքում մարզ կայցելել են մայրաքաղաքի եւ հանրապետության տարբեր մարզերի լավագույն թատերական խմբեր:

Նախաձեռնության իրականացմանն աջակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

Հասմիկ Շահբազյան

ԳԱՎԱՌԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Գավառի մարզադպրոցի պատանի բռնցքամարտիկները եւ կարատեիստները մրցանակներով եւ վերադարձել միջազգային առաջնություններից:

Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի Գանձակի տարածքային ստորաբաժանման մարզիկները վերջին մեկ ամսվա ընթացքում միջազգային մրցաշարերում մեծ հաջողություններ են գրանցել: Մարզիկներին եւ նրանց մարզչին Արաքս Մարգարյանին, Գավառի մարզադպրոցում դիմավորել են տոնական ընդունելությամբ:

Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում վերջերս կայացել է բռնցքամարտի միջազգային բաց առաջնություն, որտեղ Հայաստանի հավաքական թիմում ընդգրկված են եղել նաեւ Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի Գանձակի տարածքային ստորաբաժանման մարզիկները: Նրանք բոլորն էլ մրցաշարում գրավել են մրցա-

նակային տեղեր. Ավետ Շաքարյանը, Ռուսնո խաչատրյանը եւ Ռուբեն Մաղաթյանը դարձել են Կովկասի գավաթի չեմպիոններ, Հայկ Մանուկյանը դարձել է արծաթե մեդալակիր, Վուդյա Կիրակոսյանը՝ բրոնզե մեդալակիր:

Մարտի ամսի ընթացքում էլ Հայաստանում կայացած Այկիկենդո կարատեի «Տորնադո» միջազգային առաջնությանը Գավառի մարզադպրոցի սաներ խաչիկ Սատրյանը եւ Էրիկ Բադալյանը դարձել են չեմպիոնական գոտու մեծամարտի հաղթողներ:

Միջազգային հարթակներում հաջողություններ գրանցած մարզիկների հետ Գավառի մարզադպրոցում կազմակերպվել է նաեւ հանդիպում-գրույց, որի ընթացքում մարզիկները ներկայացրել են իրենց զգացողություններն ու տպավորությունները, իսկ մարզադպրոցի տնօրինությունը նրանց խրախուսել է հուշանվերներով եւ պատվոգրերով:

Ալվարդ Մանուկյան


ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԻՍՏԵՐՆ ԱՐԴԵՆ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ ԵՆ ԹՎԱՅԻՆԱՅՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ

Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստն իրականացվել է թվայնացված եղանակով:

Նիստերի անցկացման համար ներդրվել է ավտոմատացված ծրագիր: Հանրապետությունում համակարգն առաջինը Գավառում է գործարկվում: Պիլոտային ծրագիրն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարին կից կանանց եւ երիտասարդների խորհրդակցական մարմինը, ՄԱԿ-ի «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման եւ քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի շրջանակում:

Ծրագրի իրականացման արդյունքում ձեռք են բերել թվայնացման գործընթացն ապահովող համապատասխան տեխնիկաներ՝ 2 հեռուստացույց, անլար բարձրախոսներ, հեռակառավարման վահանակ եւ պլանշետներ:

4 միլիոն դրամ արժողությամբ ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լաւ կա-



ռավարման հիմնադրամի» աջակցությամբ՝ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի եւ ՕբսեՋն հիմնադրամի համագործակցությամբ: 2 միլիոն դրամը ներդրել է Գավառի համայնքապետարանը՝ համայնքի ղեկավարին կից կանանց եւ երիտասարդների խորհրդակցական մարմնի կողմից իրականացվող «ՏԻՄ-Բնակիչ կապ» դրամաշնորհային ծրագրով, որի շրջանակներում Գավառում նաեւ իրականացվել են ֆորում-թատրոններ, տեղեկատվական թուղթիկների տպագրում եւ սոցիալական հարթակի ստեղծում: Իրականացված աշխատանքների նպատակն է խթանել համայնքի բնակիչների ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման գործընթացներում եւ համայնքային խնդիրների լուծման հարցերում:

Ալվարդ Մանուկյան

ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՎՍ ՄԵԿ ՍՈՒԲՎԵՆՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ Է ՀԱՍՑՎԵԼ ԱՎԱՐՏԻ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում արդեն ավարտվել է փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծրագիրը, որի մեկնարկը տրվել էր 2024 թվականի վերջերին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենյոն ծրագրերի շրջանակներում:

Սեւան քաղաքի փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 70

միլիոն 781 հազար 332 դրամ, որից 28 միլիոն 312 հազար 533 դրամը ներդրվել է համայնքի, 42 միլիոն 468 հազար 799 դրամը՝ ՀՀ կառավարության կողմից:

Ծրագրի իրականացման արդյունքում տեղադրվել է 261 հենասյուն եւ 290 լուսատու, որն ընդգրկել է 17 փողոց եւ 7 բակային տարածք՝ շուրջ 8000 զծամետր երկարությամբ: Լուսավորության ցանցն աշխատում է ԼԷԴ համակարգով:

Իրականացված ծրագրի շրջանակներում լուծվել է քաղաքի համար առաջնահերթությունը՝ ներկայացնող եւս մեկ խնդիր՝ նպաստելով փողոցների եւ տարածքների անվտանգության, հարմարավետության, ապահովմանը: Հավելենք, որ այդ փողոցներում եւ բակային տարածքներում չի եղել լուսավորության ցանց կամ տասնամյակներ շարունակ ցանցը չի հազործվել:

Արմինե Ղուկասյան

ԿԱԴԻՏԱԼ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ ՄԱՐՈՒԽԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհի է հատկացրել Սարուխան գյուղի մշակույթի տանը՝ արտադրողական խմբակների գործունեությունն ապահովելու նպատակով:

2024 թվականից իր գործունեությունն է սկսել Սարուխանի մշակույթի տունը՝ կիրառական արվեստի, նկարչության եւ կավագործության խմբակներով: Գավառի համայնքապետարանը 2024 թվականի բյուջեից 1 միլիոն կապիտալ դրամաշնորհ է հատկացրել հաստատության աշխատանքները լիարժեք կազմակերպելու համար: Կապիտալ դրամաշնորհով ձեռք է բերել համակարգիչ, տպիչ, տեսահսկարահանող սարք, աշխատանքային սեղան, տնօրենի սեղան, պոռո, պահարան եւ փոշեկուլ: Իսկ համայնքապետարանի կողմից տրամադրված



565 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհի շրջանակներում կավագործության խմբակի համար ձեռք է բերվել կավի թրծման վառարան: Սարուխանի մշակույթի տան համար պահանջվող այլ անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանը կտրամադրի 2025 թվականի դրամաշնորհներով:

Ալվարդ Մանուկյան



ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՄԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈԽԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

2025 թվականի մարտի 26-27-ին Գեղարքունիքի մարզում անցկացվել են «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի համայնքային փուլի մրցումները:

Մրցումները անցկացվել են 2 տարիքային խմբերով, որոնց մասնակցել են 69 համարակրթական ուսումնական հաստատությունների թիմեր:

Առաջին տարիքային խումբը ներկայացրել են 5-9-րդ դասարանների, երկրորդ խումբը՝ 10-12-րդ դասարանների աշակերտները: Յուրաքանչյուր թիմի կազմում ընդգրկվել են 2 տղա եւ 2 աղջիկ: Այս փուլում 1-3-րդ տեղեր գրաված թիմերը ապրիլի 10-11-ին կմասնակցեն մրցաշարի մարզային փուլի մրցումներին:

Գավառի համայնքային փուլի մրցումների արդյունքում 1-ին տարիքային խմբում մարզային փուլի մասնակցության իրավունք են ստացել Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N 2 միջնակարգ, Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 եւ Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոցների թիմերը, 2-րդ տարիքային



խմբում Գավառի ավագ, Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N 2 եւ Գավառի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցների թիմերը:

Սեւան համայնքից մարզային փուլի 1-ին տարիքային խմբի մրցումներին կմասնակցեն Սեւանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական, Լճաշեն Ա. Տեր-Գրիգորյանի անվան եւ Դոմաշենի միջնակարգ դպրոցների թիմերը, իսկ 2-րդ տարիքային խմբի մրցումներին՝ Սեւանի Խ. Արմյանի անվան ավագ, Լճաշենի



Ա. Տեր-Գրիգորյանի անվան եւ Գագարինի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մարզային փուլի 1-ին տարիքային խմբի մրցումներում Սարուխանի համայնքը կներկայացնեն Վերին Գետաշենի N 1 միջնակարգ, Սարուխանի Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 եւ Ա. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոցների թիմերը, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ Սարուխանի Ս. Աբրահամյանի անվան ավագ, Ծակաբարի եւ Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցների թիմերը:

Այս փուլի 1-ին տարիքային խմբում ճամբարակ համայնքից հանդես կգան Աղբերքի, Թթուրի միջնակարգ եւ ճամբարակի N 1 հիմնական դպրոցների թիմերը, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ ճամբարակի ավագ դպրոցի, Թթուրի եւ Աղբերքի միջնակարգ դպրոցների թիմերը:

Վարդենիս համայնքից մարզային փուլի 1-ին տարիքային խմբում հանդես կգան Շատրեքի, Վանեւանի եւ Ծովակի միջնակարգ դպրոցների թիմերը, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ Շատրեքի, Վանեւանի եւ Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցների թիմերը:

Գեղամ Չարվադարյան

ԱՐԾՎԱՆԻՍՏՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՎԻՄԱԳԻՐ ՍԱՀՄԱՆԱԽԱԶՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՏՏԱԳԻՐ Է



տածախ գանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարել...»,- վկայում է հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու թողած արձանագրությունը:

Պատմահնագիտական այս ուսումնարանը կոչվում է հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու անունը: Արձանագրությունում նշվում է, որ Շապուհ Բագրատունու անունը կոչվում է հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու անունը, որը հանդիսանում է իրավական փաստագիր, որով եւ

/սկիզբը էջ 1-ում/

«Յանուն Աստուծոյ, ես, Շապուհ Բագրատունի, Հայոց սպարապետ, Տերանց տեր, որդի Աշոտի Հայոց թագավորի, ի ժամանակ Հայոց թագավորի մեծի Արմաշատայ, հարազատ եղբայր իմոյ, եւ վերադիտողի Հայոց հայրապետի Տերն Յեվանիսի, իմացաց եւ ծանեաց թէ ամենայն փառք եւ մեծություն ըսպառելոց եմ եւ վաղիվ կորոնելոց, եւ մեծափափագ տենչանովք վերակացու եւ տեսուչ առնելով գրույր իմ Սարիամ, Սյունյաց տիկին, յորում իշխանության ի Վանեվանի վանս, տուն Աստուծոյ կանգնել վիմատաշս կոփածովք, շա-

ժամանակին կարգավորվել է շրջակա գյուղերի հանդամասերի ոռոգման կարգը:

Սահմանափաշի վրա պահպանված արձանագրության բովանդակությունը առաջին անգամ բացահայտել է հայ անվանի հնագետ եւ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը, իր «Դիվան հայ վիմագրության» կոթողային աշխատության մեջ:

«Սահմանափաշն ունի 2,50 մետր բարձրություն, 1,10 մետր լայնություն: Քարը մեջտեղից կտրված է, ստորին մասը պատվանդանի վրա է, իսկ վերին

մասն ընկած է նրա մոտ, մի թմբի վրա, Ներքին Ալուչալուից Վերին Ալուչալու տանող ճանապարհի վրա: Արեւմտյան երեսին փոքր խաչ կա, իսկ չորս բոլորը՝ 20 տող արձանագրություն: «Կամաւ բարերարին Աստուծոյ, կանգնեցաւ ամենափրկիչս ձեռամբ Դավթի, յիշխանութեան Տարսայիճին եւ որդիոյ յոր Լիպարիտի եւ Ջալալին, ի սահմանս հողոց եւ ջրոց, :Բ: Գեղից, որ ի գլուխս կան վանացս Վանեվանից Շաւհարվանովն եւ Անմեռ եւ Սաւալն եւ Սալկունուն եւ Սեմեկն, Ախենց ճանապարհին եւ Ծամալին փոսն ջուրն ուրբաթն ար եւ գիշերն, միջնատափին շաբաթ եւ կիւրակին գոր կոյր Գա Գրած եւ այլ տանուտեւալք կտրեցին: ԹՎ. ՉԼԳ /1284/:

Փաստագիրը հաստատված է գյուղերի տանուտերերի կողմից: Արձանագրության մեջ հիշատակված անուններով գյուղերը ներկայումս չկան: Այժմ հուշարձանից դեպի իյուսիս, մոտ 2 կիլոմետր հեռու, Ներքին Ալուչալու գյուղն է, մոտ 3 կիլոմետր հարավ՝ Վանքով խարաբա գյուղատեղին, եւ մեկ կիլոմետր դեպի արեւմուտք՝ մեկ այլ գյուղատեղի: Այդ բոլոր գյուղատեղիներն այժմ մտնում են Արձանիստ գյուղի վարչական տարածքի մեջ», - վկայում է Սեդրակ Բարխուդարյանը:

Սակայն, ինչպես երևում է լուսանկարում, Արձանիստի սահմանափաշն արդեն ամբողջությամբ վերականգնված է իր տեսքի մեջ: Արձանիստից ներքին վկայությամբ սահմանափաշի կտրված մասերն իրար են ամրացվել

2007 թվականի ամռանը, ՀՀ Մշակույթի նախարարի հանձնարարականով, Պատմամշակութային հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի եւ Գեղարքունիքի ստորաբաժանման մասնագետների ուժերով, Արձանիստի գյուղատեւալքի կողմից տրամադրված տեխնիկայի միջոցով:

Այս վավերագիր խաչքարը, բացի իրավական գրի նշանակությունը, միաժամանակ անառարկելիորեն վկայում է առ այն, որ 13-րդ դարում անգամ, երբ Հայաստանը հայտնվել էր մոնղոլական դաժան լծի տակ, Սեւանա լճի ավազանում հիմնական ապրող բնակիչները շարունակում էին մնալ հայության հոծ զանգվածները, որոնք զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, ձկնորսությամբ, արհեստներով ու միաժամանակ կերտում էին պատմամշակութային հիասքանչ հուշարձաններ՝ հարստացնելով նախնիներին ստեղծված ազգային արժեքները: Շատ կարելի է արժեք ունեն մաւ Սահմանափաշի վրա փորագրված գյուղերի հայկական անվանումները, որոնք ժամանակին գործել են Արձանիստ գյուղի ներկայիս վարչական տարածքում:

Եվ հիմա բաց երկնքի տակ վեհորեն կանգնած է Արձանիստի գեղաբանդակ սահմանափաշը՝ որպես հայկականության անժխտելի վկայագիր ու դրբը գնացող հավերժության հուշարձան:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԲ ԵՆ ԻՐԱՎԱՆԱՅՐԵԼ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Սարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները նախագծային աշխատանք են իրականացրել զբոսաշրջության զարգացման ուղղությամբ՝ պատմաաշխարհագրական հետազոտություն իրականացնելով իրենց ծննդավայրի պատմամշակութային ու բնության հուշարձանների տարածքներում:

Նախագծային աշխատանքներն իրականացրել են 8-րդ դասարանի աշակերտները՝ պատմության ուսուցչուհի Լիլիթ Գեւորգյանի, աշխարհագրության ուսուցչուհի Աստղիկ Հակոբյանի եւ Անգելեն Լեզվի ուսուցչուհի Անուշ Դարբինյանի ղեկավարությամբ:

Նախագծի իրականացման շրջանակներում աշակերտներն իրենց ուսուցիչների ուղեկցությամբ այցելություններ են կատարել Սարտունի քաղաքի հարավարեւելյան թեւում տարածվող ու պատմության ու բնության հուշարձաններով հարուստ Մթնածոր տեղանք ու Արմաղան լեռան գագաթ, ուսումնասիրել հուշարձանները, կազմել դրանց մասին ճանաչողական գործիքներ, օրացույց ու պատմաաշխարհագրական տեղեկանքներ՝ հայերեն ու անգլերեն լեզուներով, եւ դրանք տարածել համացանցով: Ուսումնական նախագծը կյանքի է կոչվել «Զբոսաշրջությունը Սարտունիում Արմաղան լեռ, Գոմեր եւ Մթնածոր» թեմայով:


-Սարտունիում, որպես զբոսաշրջության զարգացման վայրեր, աչքի են ընկնում Գեղամա լեռնափահանի կոնաձեւ գեղեցկուհին՝ Արմաղանը, որի գագաթից երևում է Սեւանա լճի

ողջ հայելին, Գեղամա, Արեգունու եւ Վարդենիսի լեռնաշղթաները, Ագրիճի գետի ուղղանցները, անգամ Արարատ լեռը, եւ Սարտունու հնավայրերից մեկը հանդիսացող «Մթնածոր» եւ «Գոմեր» անունը կրող ամառային արտավայրը, որտեղ պահպանվել են հինգ տասնյակից ավելի միջնադարյան ժամանակաշրջանի խաչքարեր ու տապանաքարեր: Մթնածորում պահպանվել է նաեւ հնագույն ջրանցք, որը գործում է մինչ օրս, կիկլոպյան ամրոցներ, գյուղատեղիների ավերակներ, միջնադարյան կառույց հանդիսացող Սուրբ Ստեփանոս եկեղեցին, լեռան փեշով ձգվող քարավանային ճանապարհի հետքեր, բնության սքանչելի հուշարձաններ: Նախագծի նպատակն էր խորացնել գիտելիքները հայրենի բնաշխարհի ճանաչողության շուրջ, ձեւավորել գիտելիքներ զբոսաշրջության շուրջ, ուսումնական նախագծի նյութը

ներկայացնել օտար լեզվով՝ տեսարժան վայրերը զրավչության նյութ դարձնելով օտարերկրացիների համար: Միաժամանակ նկարահանվել է տեսանյութ՝ Արմաղան լեռան ու Մթնածորի մասին: Նյութում ներկայացվել է պատմական ակնարկ Սարտունի քաղաքի հիմնադրման, բնակչության տեղաշարժերի, պատմական այլ կարեւորագույն իրադարձությունների մասին: Որպես նյութի աբյուր՝ օգտագործվել են պատմագիտական փաստերը, համացանցում առկա նյութերը, ինչպես նաեւ բանավոր գրույցները: Գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի իրականացման համար, անշուշտ, օվարված բնական ու պատմական հուշարձանների տարածքներում կարելի է հսկայածավալ ներդրումներ կատարել ճոպանուղիների, ճանապարհների, գիշերակացների կառուցման ուղղությամբ: Բայց առաջին անհրաժեշտ քայլը մենք համարում ենք Գեղիսկիտ գյուղով անցնող Սարտունի-Գետափ միջպետական ճանապարհի սկզբից մինչեւ Մթնածոր տանող ճանապարհի ասֆալտապատումը, որի երկարությունը կազմում է 1-1,5 կիլոմետր եւ պատմական գերեզմանոցի ցանկապատումը, ինչպես նաեւ պատմական հուշարձանների մասին ցուցանակի տեղադրումը: Կարծում ենք, որ այս քայլը կարող է լինել Մթնածորի ողջ զրավչությունների ներկայացման ու յուրացման առաջին լուրջ ձեռնարկը, ներկայացրեց պատմության ուսուցչուհի Լիլիթ Գեւորգյանը:

Խոսրով Խլղաթյան





ԳԵՂԱՄԱ 4



Հայ ականավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի «Ջաղալու» կտավը, որը պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում, շատ կողմերով առնչվում է հեղինակի կյանքի մի դրվագի, տպավորությունների, իսկ գլխավորապես՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղի պատմության հետ:

Ծովակի մշակույթի տան աշխատակից Անդրանիկ Նիկողոսյանի տեղեկացմամբ՝ Մարտիրոս Սարյանի «Ջաղալու» կտավը ստեղծվել է 1923 թվականին: Կտավի մասին տեղեկություն ինքը ստացել է ռուսաստանաբնակ ծովակցի Շահեն Մարտիրոսյանից, ով ամուր կապեր է ունեցել անվանի հուշարձանագետ Սամվել Կարապետյանի հետ: Այնուհետ Անդրանիկ Նիկողոսյանը զննացել է այդ կտավի հետքերով, Հայաստանի պետական պատկերասրահում դիտել

այն ու փորձել պարզել կտավի ստեղծման պատմությունը, որը ներկայացրել է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, Մարտիրոս Սարյանի թոռնուհի Ռուզաննա Սարյանը:

Ինձ շատ հետաքրքրեց, թե երբ է Մարտիրոս Սարյանը եղել մեր գյուղում, որը դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին, երբ ստեղծվել է այս կտավը, Ծովակի փոխարեն կրել է Ջաղալու անունը: Ռուզաննա Սարյանի պարզաբանմամբ Մարտիրոս Սարյանն ունեցել է երեք եղբայր՝ Սերոբ, Սահակ, Հովհաննես անուններով: Սերոբը ցարական բանտ է նստել իր գաղափարական հայացքների պատճառով: Նա իր պատիժը կրել է Սեւանա լճի ավազանում՝ Սոթք գյուղի կալանավայրում: Եղբորը տեսակցելու նպատակով էլ Մարտիրոսը եկել, անցել է մեր գյուղով, տպավորվել նրա հրաշք բնությամբ, գյուղական տեսարաններով ու հետագայում այն արտացոլել իր հայտնի կտավում:

Այդ ժամանակ Սեւանա լիճը շատ բարձր մակարդակի վրա է գտնվել, այնքան, որ տները հիմնականում տարածված են եղել սարի լանջին շատ մոտիկ: Կտավում պատկերված է մեր գյուղի հարուստ մարդկանցից մեկի՝ Ամրխանի կավածքը, Սեւանա լճի ափը, մարդիկ, զոմեշները, լեռը եւ նրան հարող գեղատեսիլ ձորը, որը մեր գյուղացի Օրդուխանի անունով կոչվել է Օրդոյի ձոր:

Այսօր Ծովակ դար-

ձած ու կտավում պատկերված հին Ջաղալուն շատ է տարածվել, դարձել շատ ավելի շեն ու զարգացած բնակավայր, սակայն Սարյանի այս ստեղծագործությունը մեզ համար եղավ մի անկրկնելի հայտնություն, մի հզոր պատմական ու հոգեւոր արժեք, որն ավելի է բարձրացնում մեծանուն հայի՝ Մարտիրոս Սարյանի անունն ու գործը, ներկայացրեց Անդրանիկ Նիկողոսյանը:

Ծովակ գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, որտեղ մարդկային կանքը սկզբնավորվել է անհիշելի ժամանակներից: Կտավում պատկերված ձորի արեւմտյան կողմի բարձունքին պահպանվել են Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով թվագրվող ամրոցի հետքեր եւ Ուրարտուի արքա Սարգուր Երկրորդ թագավորի սեպագիր արձանագրությունը՝ ամրոցի հյուսիսային կողմի ժայռեղեն հատվածում:

Խոսքով Խլղաթյան



ՄԱԴԻՆԱ ԳՅՈՒՂՆ ԱՐԴԵՆ ՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻ



Վերջապես, երկար սպասումից հետո, Մադինա գյուղի ազգաբնակչությունը ունեցավ իր եկեղեցին:

Դեռևս յոթ տարի առաջ բարերար Միեր Գառնիկի Բաղդասարյանի նախաձեռնությամբ սկսվեց Մադինա գյուղի եկեղեցու շինարարությունը, որի կառուցումն ավարտվեց մոտ օրերս, որը շուտով իր դռներն է բացելու հավատացյալ ժողովրդի առաջ:

Բարերարը նախկին մադինեցի է, իր ծննդավայրում ապրել է ընդամենը 17 տարի: Միերը սերված է Մադինայի ամենաաշխատասեր, համեստ գյուղական մի-

ջավայրի՝ Գառնիկ եւ Հռիփսիմե Բաղդասարյանների ընտանիքից: Մոտ 40 տարի է, ինչ ապրում է արտերկրում, բայց միշտ կապված է եղել իր ծննդավայրին: Բարեգործությունը Միերի եւ իր ընտանիքի գերնպատակն է եղել: 7 տարի առաջ նա եկավ հայրենի գյուղ եւ որոշեց ծննդավայրում կառուցել եկեղեցի, մտածելով, որ այն գյուղի համար լինելու է մնայուն արժեք: Եկեղեցին կառուցվեց եկեղեցաշինության ամենաարդիական նախագծով: Այն ունի գեղեցիկ զմբեթներ, հիանալի զանգակատուն՝ իր հոյակապ բարձրությամբ: Կառույցը հիացմունք է պատճառում ոչ միայն համայնքի բնակիչներին, այլ բազմաթիվ տեղացի եւ օտարերկրյա զբոսաշրջիկներին:

Այս կարեւոր ձեռնարկի համար շնորհակալություն ենք հայտնում Բաղդասարյանների ընտանիքին՝ Միերի նման հայրենասեր, բարերար, իր ծննդավայրին նվիրյալ որդի դաստիարակելու համար:

Կանցնեն սերունդներ, բայց Միեր Բաղդասարյանի բարի գործը հավերժ կմնա Մադինա գյուղի պատմության մեջ:

Արտաշ Մնացականյան
Գ. Մադինա

ՎԱՐՍԵՐԻ ԼՃԱՇԵՆԻ ԾՈՒՂԱԳՅՈՒՂԻ ՄԱՆԱԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏԵՂԱԴՐՎԵԼ ԵՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՑԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

«Էներգախմբայողության աջակցման հիմնադրամի» եւ Սեւանի համայնքապետարանի համագործակցությամբ, «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի եւ էներգաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում եւ պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» ծրագրի շրջանակներում, Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Լճաշեն, Ծովագյուղ եւ Վարսեր բնակավայրերի մանկապարտեզներում արդեն տեղադրվել են 5 ԿՎտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայաններ:

Ծրագիրն իրողություն է դարձել Եվրոպական Միության եւ Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության ֆինանսավորմամբ, «ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի համար» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից՝ որպես «Էկոսերվ» բնապահպանական ծրագրի մաս:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ:

Մանկապարտեզների շենքերում տեղադրվող յուրաքանչյուր կայանի համար համայնքային ներդրումը կազմում է ընդհանուր արժեքի 25 տոկոսը:

Կայանները շուտով կգործարկվեն:

Արմինե Ղուկասյան



ԶՈՒՂԱՔԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՀԱՐԵՀԱՍ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Զուլաբեր բնակավայրում ազդարարվել է «Ղեկավար» հիմնադրամի «Հարեհաս» կրթական ծրագրի մեկնարկը:

Ծրագիրը լավագույն հնարավորություն է եւ հարթակ՝ կրթության միջոցով կերտելու կայուն ապագա, բնակավայրերը դարձնելու կենսունակ եւ ինքնաբավ:

Ծրագիրը միտված է՝ մարզի համայնքները կենսունակ, ինքնաբավ եւ կայուն դարձնելու:

«Հարեհաս» ծրագիրը 6 տարվա ռազմավարությամբ զարգացնելու է Գեղարքունիքի մարզի 88 բնակավայրերը ու կրթելու է 3520 կանանց:

Ծրագրի արդյունքում ստեղծվելու են 40 կրթական կենտրոն, որոնցից մեկն էլ գործելու է Զուլաբերում:

30 կանայք արդեն սկսել են իրենց կայուն ապագան կերտելու գործընթացը՝ հաղթահարելով առկա մարտահրավերները:

Զուլաբեր բնակավայրում «Հարեհաս» կրթական ծրագրի

շնորհաճշգրտելու մեկ պատեհ առիթ էր խոսելու ծրագրի նշանակության, կանանց դերի բարձրացման եւ ծրագրի միջոցով նոր մշակույթ ձևավորելու մասին: Վերանորոգված եւ կահավորված կրթական կենտրոնը նոր միջավայր

ձեւավորելու սկիզբն է դնելու՝ համախմբելով կանանց եւ աղջիկներին:

Ծրագրի նախաձեռնողները փաստում են, որ արդյունքում ակնկալվում է մինչեւ 176 համայնքային նախագիծ, որոնք նախապես մշակվելու են մասնակիցների հետ:

Ծրագրի ընթացքում 3520 կին կունենա անվճար կրթության հնարավորություն, այդ թվում՝ «Armenian Code Academy»-ում, իսկ մինչեւ 60 տոկոսը՝ նաեւ աշխատանք:

Բազային դասընթացը տեւելու է 3 ամիս եւ միավորելու է «Նախագծի կառավարում», «Անգլերեն», «Արտ թերապիա», «Ծնողավարություն» եւ այլ բաղադրիչներ:

«Ղեկավար» հիմնադրամի «Հարեհաս» կրթական ծրագիրը միավորում է մասնակիցներին՝ «Միասին մենք ուժ ենք» կարգախոսով, որի շնորհիվ կարող է փոխվել բնակավայրերի ու համայնքների դեմքը:

Արմինե Ղուկասյան



ՄԱԼՈՅԻ ՎԱՆՔՆ ՈՒ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ



/սկիզբը էջ 1-ում/

Սալոյի վանքից քիչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, նկատելի են կիսավեր եկեղեցու պատերը եւ մի քանի խաչքարեր: Տապանաքարերի ու խաչքարերի նկատելի քանակություն կա բնակավայրի հարավային թեւում, որոնք թվագրվում են 13-18-րդ դարերով: Իսկ գրեթե շրջանաձեւ տարածվող բնակավայրի ավերակներում, մի քանի հեկտար տարածքի վրա նկատելի են բնակարանների պատերի, հնագույն դամբարանների կամ կրոնիկների, նույնիսկ ճանապարհների հետքեր: Մեր այցելության ժամանակ «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանը հողի շերտի վերգետնյա մասում խեցեղեն գտավ, որը եւս մեկ համոզիչ փաստ է առ այն, որ այս հնավայրը գործել է հազարամյակներ առաջ՝ վաղ բրոնզեդարյան շրջանից սկսած:

Ազարակ կամ Արծվաքարի դուրաներ կոչվող հնավայրի եւ Սալոյի վանքի մասին առաջին վկայությունը մեր պատմագրության մեջ թողել է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը՝ երկրորդը՝ Երվանդ Լալայանը, երրորդը՝ Սեդրակ Բարխուդարյանը:

Ազարակ կոչվող հնավայրի հարավային բարունքի վրա փռված է Դումլուխի վաղբրոնզեդարյան ամրոցը, որի մասին իր «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ վկայություն է թողել անվանի հնագետ Գեղեղն Միքայելյանը:

«Դումլուխի ամրոցն, ըստ վայրի տեղադրության, ունի ձվաձեւ տեսք եւ զբաղեցնում է շուրջ մեկուկես հեկտար տարածություն: Ամրոցի մակերեսը շատ քարքարոտ է, երեւում են բազմաթիվ բնակարանների պատերի հիմքեր, որոնց կառուցման տեխնիկան նույնն է, ինչ պարիսպներին: Ամրոցի պարիսպները ձգվում են բարձունքի հյուսիսից դեպի արեւմուտք եւ ապա հարավ: Չի պաշտպանված ամրոցի արեւելյան կողմը, քանի որ այդ մասում բարձունքն ունի խիստ թեք, քարքարոտ ու անմատչելի լանջ:

Ամրոցի պարիսպները, ի տարբերություն այլ պարիսպների շարի, իրենց դյուրամատչելի տեղերում եռաշար են, մեծ ու անտաշ քարերով, որոնց մեջ լցված են մանր քարեր ու խիճ: Այսպես պարիսպն ավելի կուռ ու անխորտակ է դառնում:

Ամրոցն ունեցել է ութ քարաբուրգ, 5x5 մետր մեծության, որոնցից երկուսը եղել են մուտքի աջ ու ձախ կողմերում, մեկը՝ պարսպի հյուսիսային վերջավորության վրա, մյուսը՝ հարավային ծայրում, մնացած երեքը՝ հավասար հեռավորության վրա, արեւմտյան մասում: Ինչպես վերելում ասվեց, ամրոցի արեւմտյան մասը դյուրամատչելի է, ուստի պատահական չէ, որ որ աշտարակները գտնվում են այդ մասում: Մուտքը հյուսիսարեւմտյան կողմից է, եւ այդտեղից դուրս եկող ճանապարհը հյուսիսարեւմտյան եզրով պարսպապատված է, ինչպես այլ ամրոցների մուտքերին մոտեցող ճանապարհները:

Ինչպես ամրոցի ներսում, այնպես էլ ամրոցից դուրս կան բազմաթիվ դամբարաններ, որոնք իրենց արտաքին տեսքով չեն տարբերվում Լճաշենի շրջակայքի եւ այլ բոլորածե ու խոշոր քարերով ծածկված դամբարաններից: Դրանց առկայությունը ամրոցի ներսում ենթադրել է տալիս, որ մինչեւ ան-

րոցի կառուցումն այստեղ եղել է մի ընդարձակ դամբարանադաշտ: Այս ենթադրությունը նաեւ հիմնավորվում է նրանով, որ հավաքած խեցեղենը մեծամասամբ ունի սեւ փայլեցված գույն, ծածկված է զարդանկարներով, որոնք, հավանաբար, պատկանում են վաղ բրոնզեդարյան մշակույթին: Սակայն չի բացառվում, որ դամբարանները կարող են լինել ավելի ուշ դարաշրջաններում թվագրվող»,- վկայում է Գեղեղն Միքայելյանը:

Սալոյի վանքից շուրջ 1 կիլոմետր դեպի արեւմուտք տարածվում են Դազարի ձոր կոչվող բնակավայրի ավերակները, իսկ նրան մոտիկ, նույն Սալոյի վանքի հյուսիսային ուղղությամբ, դարձյալ մոտ 1 կամ 2 կիլոմետր հեռավորությամբ նկատելի են մեկ այլ ամրոցի պարիսպների հետքեր, որոնք կարիք ունեն հետազոտության, հիմնավորման ու քարտեզագրման, քանի որ այս տեղանքն առայժմ չի ընդգրկված հուշարձանների պահպանության պետական ցանկում ու չի հիշատակված մեր հնագետների աշխատություններում:

Այսքանով կարելի է եզրակացնել, որ Ազարակ կոչվող բնակատեղին չորս կողմից շրջապատված է եղել անառիկ բերդ-ամրոցներով ու պարիսպներով, որոնք իշխող դիրք են գրավել մերձակա տարածքների ու ճանապարհների վրա: Միաժամանակ այս ամրոցները եւ բնակատեղիները արեւելյան, հարավային ու հյուսիսային կողմերից պատնեշել են Վելիբուխի երկրի մայրաքաղաքը թշնամական հարձակումներից:

Տարածքն այժմ լիովին զուրկ է ջրաղբյուրներից, սակայն դրանց գոյությունը չէր կարող բացառվել շատ ավելի հեռավոր ժամանակներում: Չի կարող բացառվել եւ այն, որ թվարկված բնակատեղիներն ու բերդերը սնուցված լինեին ավելի հեռվից լեռնային տեղանքներով բերված ջրանցքներից կամ ջրատարներից:

Իսկ ջրի հիմնական աղբյուրը կարող էր հանդիսանալ հենց Սեւանա լիճը, որի մակարդակը ժամանակ առ ժամանակ բարձրացել ու հասել է Սալոյի վանքի արեւելյան եզրի ժայռերի ստորոտին, ու բնակիչները խմելու ջուրը վերցրել են հենց լճից, խաղաղ օրերին ժայռեղեն արահետով, պաշարված վիճակում՝ զաղտնի գետնուղով կամ գետնուղիներով միջոցով:

Թե՛ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, թե՛ Երվանդ Լալայանն ու Սեդրակ Բարխուդարյանը Մանուշարի դաշտ կոչված տարածքում, Նորատուսից մինչեւ Մարտունու վարչական սահման ձգվող ճանապարհին նշում են չորս ավերակ բնակատեղի, որոնցից մեկը կոչվում է Ազարակ, որի արեւելյան եզրին են մինչ օրս կանգուն է մնում Սալոյի վանքը: Երվանդ Լալայանի վկայությամբ՝ այստեղ պահպանվել են մեկ եկեղեցու, յոթ ծիսհանքի եւ բավականաչափ տների հետքեր: Սակայն այս բնակավայրի, վանքի ու պահպանված վիմագրերի պատմությանն առավել մանրամասն անդրադարձել է Սեդրակ Բարխուդարյանը:

«Գավառագետի հովտից անմիջապես դեպի հարավ, մինչեւ Մարտունու շրջանի Երանոս գյուղը, բռնում է մի ընդարձակ լեռնադաշտ, որի մեջ տեղտեղ բարձրանում են բլուրներ եւ նախնադարյան դամբարաններ: Լեռնադաշ-

տը միանգամայն զուրկ է խմելու ջրից, բայց ունի արգավանդ հողեր, որոնք Գավառագետի աջ ափին գտնվող գյուղերի արոտավայրերն ու ցանքսերն են: Ներկայումս այդ դաշտերում շեն գյուղեր չկան, բայց հնում եղել են չորսը՝ բոլորն էլ տեղավորված լճի ափին: Այս չորս գյուղատեղերում կան բազմաթիվ տների, եկեղեցիների եւ մատուռների ավերակներ, ինչպես եւ ծիսհանքերի ավերակներ եւ գերեզմաններ: Գյուղատեղերից երեքի մեջ կան նաեւ արձանագրություններ: Դրանցից մեկը Արծվաքարի դուրաներ կոչվող վայրն է, որը գտնվում է Արծվաքար գյուղից մոտ չորս կիլոմետր հեռու, լճի պատնեշանման ափի գլխին, մի նստվածքի մեջ: Այստեղ կանգնած են սրբատաշ քարերով շինված մի փոքրիկ եկեղեցի, որը կոչվում է Սալոյի վանք՝ 1231 թվականին կառուցված, մի ավելի մեծ եւ թաղածածկ եկեղեցու հիմնապատերը, մի քանի ծիսհանքի եւ բազմաթիվ տների ավերակները: Գյուղատեղիի արեւելյան եզրին է գերեզմանատունը: Արձանագրության մեջ վայրը կոչվում է Ազարակ, թե՛ սկզբնապես այդպիսին է եղել, բայց մեծ եկեղեցու մնացորդներն ապացույց են, որ այն մեծ գյուղ է դարձել հետագայում»,- վկայում է Բարխուդարյանը:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության կողմից տրամադրված տեղեկության՝ այստեղ պետական պահպանության ցանկում են 13-18-րդ դարերի գերեզմանոց՝ 36 խաչքարերով ու բազմաթիվ տապանաքարերով, որոնցից ութը գտնվում են Սալոյի վանքի մուտքի ձախ ու աջ կողմերում, որոնք թվագրվում են 13, 14, 15, 16, 17-րդ դարերով: Հարավային կողմում գտնվող գերեզմանոցի խաչքարերը թվագրվում են 13-18-րդ դարերով:

Սալոյի վանքի արեւելյան պատին արձանագրված է « Ի թուականութեանս Հայոց ՌՁ/ 1231/ յիշխանութեան Իւանէի եւ Աւագի, ես, Մինայս, գնեցի



զագարակս եւ շինեցի գեկեղեցիս. ես եւ Սագուխտ ամուսին իմ, յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց: Ձատկին երկու աւր ժամ :Ա:Ինային :Ա: Սանդուխտոյ առնեն անխափան. կատարողն օրինած է»:

Բարխուդարյանի վկայությամբ՝ Սմբատյանցը Սագուխտ ամուսին սխալմամբ կարդացել է Սագուտ, ունից նույնությամբ մեջբերել է Երվանդ Լալայանը:

Եկեղեցու արեւմտյան պատի հյուսիսային մասում արտաքուստ մի երեսպատ քարի վրա կան չորս խորաններ՝ խաչերով, որոնց գլխին ուռուցիկ տաշերով գրված է. «Սուրբ խաչս բարեխոս հոգվոյն Սարգիսին»: Հարավային մասում « Ես, Յուսէպս....»: Եկեղեցու մուտքի առաջ կա մի տապանաքար, որի վրա գրված է. «Տապանս Պայիս/ե:Բ: աղբարս :Ա: աւր մեռայք. Յիշեցեք ի Քրիստոս»:

Մեծ եւ գեղաքանդակ խաչքար՝ հետեւյալ գրությամբ՝ «Կանկնեցի խաչս ի փրկութիւն հոգւոյ Գուհարին. Յիշեցեք ի Քրիստոս. ես Գրիգոր, Կանկնեցի խաչս ընծայ ծնողաց իմոց: Սկրտիչ»/Հավանաբար կազմողի անունն է/:

Սալոյի վանքի հարավային եզրին



գտնվող գերեզմանատան վերձանված արձանագրությունները հետեւյալն են.

1. Տապանաքար, օրորոցածեւ, հյուսիսային երեսին կենցաղային տեսարան, միջին շրջանակին 1 տող. «Այս է հանգիստ Սելիքին, Յիշատակ. փոխվեցաւ ի Քրիստոս թ. 225 /1536/

2. Խաչքար, գեղաքանդակ, կրկնախորան, քիվին եւ շրջանակներին 4 տող. «Սուրբ խաչս բարեխոս Վարդումին եւ Դող...ացին Մարիամին. Քիրամ կազմող: Թվ. ՌԾՂ/ 1605/:

3. Խաչքար, գեղաքանդակ, ջարդոտված, քիվին եւ խորանի շուրջը՝ «Սուրբ խաչս բարեխոս Սարգիսին. Թվ. ՌԾԱ/1602/:

4. Խաչքար, գեղաքանդակ, կոտրված 2 մասի, քիվին 1 տողի մնացորդ. «Սուրբ խաչս բարեխոս Աղամին եւ ծնողաց: Քիրամ կազմող»:

5. Խաչքար, փոքր, քիվին 1 տող. «Աստված ողորմի եղումին»:

6. Խաչքար, փոքր, 1 տող. «Սուրբ խաչս բարեխոս Ալթանա»:

7. Խոյ-տապանաքար, զարդաքանդակներով, գլուխը կոտրված-անհետացած. «Այս է հանգիստ Դանիելիս»:

Ըստ Բարխուդարյանի՝ իր կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում այս հնավայրից անհետացել են արձանագրություններ, որոնք ժամանակին վավերագրվել են Սմբատյանցի կողմից: Դրանք եղել են երկու խաչքարերի եւ մեկ տապանաքարի վրա:

1. «Ես, Քիշմիրս, կանգնեցի Սուրբ խաչս Գեղեղնին. թվ. ՌԾԾ /1701/:

2. «Այս է հանգիստ Սահակին. թվ. ՌԾԾ /1705/. Ես, Ավանես կազմեցի. ես Սարուխան կանգնեցի. Չախրախանս կազմել տվի»:

3 Մի խաչքարի վրա էլ միայն պահպանված է եղել թվականը՝ 22Ա /1532/ : Տապանաքարերից մեկի վրա կա կենցաղային տեսարան՝ տղամարդու հստակ պատկերով, երաժշտական գործիքը՝ ձեռքին, գլխավերելուն՝

աղավմին, դիմացը՝ եղջերուն: Մի ջարդված տապանաքարի վրա էլ պատկերված է տղամարդ՝ ձեռքերը կրծքին խաչածեւ դրած:

Մամռակաված վիճակում անգամ իրենց շքեղությամբ, զարդանախշերի բազմազանությամբ, մտահոգումների բացառիկությամբ փայլում են բոլոր վիմագրված կամ անվիմագիր խաչքարերը՝ վկայելով հայկականության հավերժական երթի մասին:

Սովորական աչքով է նկատելի է, որ տարածքում ակտիվորեն աշխատել են գանձագողերը, քանի որ գերեզմանոցի քարերի տակ երեւում են փորվածքների հետքեր, որոշ տապանաքար-խաչքարեր շուռնումուռ են տրվել: Շատ գերեզմանաքարեր կամ հնագիտական այլ արժեքներ էլ պարզապես ժամանակի ընթացքում ծածկվել են հողի հաստ շերտով:

Բնական է, որ այստեղ հնագիտական պեղումներ իրականացնելու հսկայական ճակատ կա, բազմաշերտ հուշարձանի դարավոր գաղտնիքները բացահայտելու, հնագիտության ու հայագիտության մեջ նոր ուղղումներ մտցնելու անհրաժեշտություն:

Խոսքով Խաչքար

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Հեռավոր Սիբիրի փոքրիկ քաղաքներից մեկի ոչ նշանավոր մի գործարանում Ադոն ստանձնեց աղբատար բանվորի պարտականությունը: Գործարանի բակի տարածքի տարբեր մասերում դրված աղբամանների աղբը նա դատարկում էր աղբատար ավտոմեքենան, դատարկ ամանները դնում իրենց տեղերը եւ դրանով ավարտում իր գործը: Նրա աշխատանքն այնպիսին էր, որ պետք է կատարվեր ամեն օր՝ վաղ առավոտյան եւ ուշ երեկոյան: Այնպես որ, գործարանի աշխատանքի եռուն ժամերին Ադոն գրեթե իր գործն ավարտած էր լինում եւ մարդկանց հետ չէր շփվում:

Գործարանում աշխատող բանվորներից ոչ մեկը նրան չէր ճանաչում: Ադոն խնդրել էր գործարանի դիրեկտորին, որ հանրակացարանի փոխարեն իրեն բնակեցնի գործարանի բակի շինություններից մեկում, որպեսզի վաղ առավոտյան սկսի գործն ու չխանգարի գործարանի եռուզեռին: Այդ բանը ձեռնառու էր նաեւ դիրեկտորին, քանի որ բակի մաքրությունը կարող էր հաճելի տպավորություն թողել վաղ առավոտյան բակը մուտք գործող բանվորների վրա: Այդ պատճառով էլ դիրեկտորը նրան տեղավորել էր գործարանի բակում գտնվող մի փոքր խցանման շենքում: Այնտեղ հազիվհազ տեղավորվել էր մի փայտե թախտ, մի փոքրիկ սեղան եւ մի աթոռ:

Ադոն իր աշխատանքից հետո մտնում էր այդ խուցն ու գրեթե դուրս չէր գալիս այնտեղից: Հասկանալի պատճառով նա չէր ուզում շփվել մարդկանց հետ, չէր ուզում իրեն ճանաչեն եւ իր տեղը իմանան: Նա մեկ-մեկ մտնում էր բանվորական ճաշարանը, այն էլ երեկոյան ժամերին, երբ ճաշարանում լինում էին միայն խոհարարներն ու մատուցողները: Ամեն ինչ լավ էր նրա համար. ռոճիկը բարձր, քնելատեղը հարմար, աշխատանքն էլ ոչ այնքան ծանր: Սակայն նա իրեն զգում էր մեռածի պես: Մինչեւ գյուղ գնալը նա այն կարծիքին էր, որ գյուղում իրեն կհարգեն, քեֆն ու հալը կհարցնեն, իսկ մոտիկներն ու հարազատները դարիպությունից վերադարձածին տուն կիրավորեն ու պատիվ կտան: Սակայն իր աչքով տեսավ, թե ինչպես ոչ մեկը չգտնվեց,

որ նայեր իր երեսին: Նույնիսկ հարազատ տղաները չբարեկեցին նրան: Ավելին, կրտսեր որդին ամաչելուց թողեց հարազատ գյուղն ու բնակություն հաստատեց հեռավոր մի շրջանում՝ անիծելով հորն ու նրա գերդաստանը: Իսկ եթե դրան ավելացնենք պաշտոնատար անձանց կողմից նրան հետապնդելու սարսափը, ապա, իրոք, Ադոն իրեն պետք է զգար մեռած:

Ադոնի ծնվելու լուրը պակաս արագությամբ չտարածվեց գյուղում: Նրա նկատմամբ վրեժով լցված տղամարդիկ վշտացան, ավստացին, որ դժվարացավ Ադոնից հաշիվ պահանջելու գործըն ու նրա հետ դատաստան տեսնելը:

Գերմանական ծամբարում Ադոնի անմիջական մասնակցությամբ ֆաշիստները սպանել էին համագյուղացիներից երկուսին: Այդ բանը գիտեին բոլորը, գիտեին նույնիսկ սպանվածների հարազատները: Այդ չարագործության կենդանի վկան էր Համո Հարությունյանը, որը եւս ցանկանում էր Ադոնից վրեժ լուծել: Սակայն Ադոնի գյուղում լինելու օրերին ինչպես Համոն, այնպես էլ սպանվածների հարազատները միտումնավոր կերպով օրենքին չդիմեցին՝ մտածելով, որ լավագույն դեպքում օրենքի մարդիկ նրան բանտարկել կտան, եւ դավաճանը դրանով կազատվի իրենց դատաստանից: Նրանք ուզում էին անձամբ վրեժ լուծել Ադոնից:

Ադոնի հանկարծակի անհետանալը շատերի հաշիվները խառնեց: Այդ պատճառով էլ նրանք ուղիներ էին փնտրում Ադոնի գտնելու համար: Գյուղի տղաներից մի քանիսը Ռուսաստանի տարբեր քաղաքներում աշխատանքի տեղավորվեցին միայն ու միայն Ադոնի փնտրելու եւ նրա տեղը իմանալու նպատակով: Նրանք նամակներով կամ հանդիպումներով միմյանց տեղյակ էին պահում որոնման արդյունքների մասին: Դավաճանին որոնողները լցված էին նրան սատկացնելու մոլուցքով եւ օրենքին պատասխան տալու վճռականությամբ: Սակայն դա չէր խանգարում, որ նրանք իրենց մտադրությունը կենսագործելուց հետո էլ անհայտ մնային: Դա ավելի ձեռնառու էր ու այդ մեթոդով էլ որոնումը շարունակվում էր:

Երկու տարի էր, ինչ Ադոն աշխատում էր նույն գործարանում եւ ապրում էր նույն տնակում: Նա զգալի չափով ընտելացել էր պայմաններին եւ իր լավ աշխատանքով մտել էր գործարանի դիրեկտորի աչքը: Բացի դրանից՝ իրեն ապահով ու ազատ էր զգում: Աշխատանքից հետո ազատ ժամերին զբոսնում էր քաղաքում, լինում էր մարդաշատ վայրերում, մտնում էր խանութներ: Ադոնից հաջողվել էր նույնիսկ հանդիպել մի հայ մարդու հետ, որն ընտանիքով բնակվում էր այդ քաղաքում եւ ուներ լավ շրջապատ: Հային իր ծանոթ ռուսներն անվանում էին Արտյոմ՝ դժվարանալով արտասանել իսկական անունը՝ Արտավարդ: Արտավարդը հաճախ Ադոնին տուն էր հրավիրում, հյուրասիրում հայկական սովորությամբ եւ նարդի խաղում նրա հետ: Արտավարդը վաղուց բնակություն էր հաստատել այդ քաղաքում: Նա աշխատում էր նույն գործարանում եւ անվանի փականագործ էր, մոտավորապես Ադոնի տարիքին: Արտավարդը, իհարկե, չգիտեր Ադոնի կենսագրությունն ու արարքները եւ իր ծանոթությունը շարունակում էր նրա հետ՝ որպես հայրենակից:

Ամպամած ու մշուշոտ մի օր էր: Կապույտ ու թանձր մշուշը մութի պես փռվել էր քաղաքի վրա եւ հոսում էր փողոցներում ու բակերում: Այն այնքան խիտ էր, որ փողոցում քայլող մարդիկ իրենց դեմքի վրա զգում էին մշուշի թանձրությունը:

Ադոն ավարտել էր այդօրվա իր աշխատանքը, փոխել էր հագուստները, դուրս էր եկել իր տնից եւ փողոցով քայլում էր դեպի քաղաքի կենտրոնական մասը: Մարդաշատ վայրերից մեկում հանկարծ կողքից նրան նկատեց ու ճանաչեց մի հաղթանդամ տղամարդ: Հաղթանդամն իրեն ցույց չտվեց Ադոնին եւ կամացույց հետեց նրան: Վարժված հետախույզի նման գնում էր նրա հետեւից՝ աչքից բաց չթողնելով նրան: Սիսգին ժամանակ նրա հետեւից քառ զալով՝ հաղթանդամը հասավ մինչեւ գործարանի բակը, տեսավ այն տնակը, որի դուռը Ադոն գրպանից հանած բանալիով բացեց եւ ներս մտավ:

Հաղթանդամն Ադոնին որոնողներից մեկն էր: Ադոնի գտնելը նրա համար մեծ նվաճում էր եւ ուրախություն



պատճառող գյուղ: Նա այնքան ուրախացավ, ինչքան պետք է ուրախացած լիներ Կոլումբոսը Ամերիկան գտնելու ժամանակ: Հաղթանդամը, սակայն, իր տեսածով եւ ուսումնասիրածով անմիջապես չբավարարվեց: Սոստավորապես յոթ օր, առանձնապես երեկոները, ուսումնասիրում էր գործարանի բակում գտնվող տնակը, ուր ապրում էր դավաճան Ադոն եւ համոզվեց, որ նա գիշերները մենակ քնում է այդ տնակում:

Դարձյալ անցան օրեր, գործարանի մարդիկ նկատեցին, որ բակում թափված աղբը չի մաքրվում: Ավելին, գնալով շատանում է: Երեւի օրեր շարունակ աղբամանները լցվում են ու չեն դատարկվում: Աղբատար մեքենայի վարորդը պատմում է, որ ինքը որոշված ժամին լինում է գործարանի բակում եւ սպասում աղբ բարձող բանվորին, սակայն նա չի երեւում: Այդ համագամանքը զարմանք է պատճառում գործարանի դիրեկտորին: Նա անձամբ եղավ տեղում եւ փորձեց բացել տնակի դուռը: Դուռը փակ էր ներսից: Դիրեկտորն ու իր հետ եղած մարդիկ սկսեցին ծեծել փակ դուռը, ներսից ոչ մի ձայն: Ձեռքով իրեցին, որպեսզի բացեն, սակայն անդրդվելի դուռը բացվելու ոչ մի նշան ցույց չտվեց:

**/շարունակելի/
Արտաշ Ստեփանյան**

ԱՄՔ ՄԻՐՈՒ ԵՎ ԱՆՄԱՐՈՒԹՅԱՆ. ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԴՇԽՈՒՂԻ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Երկու-երեք րոպե չէր անցել, երբ տան ծառայողի ուղեկցությամբ ներս մտավ հյուրը: Ադոն ընդառաջ գնաց նրան, ջերմ բարեկեց եւ ներկայացրեց տիկնոջը:

-Դշխուհի, Թիֆլիսից ժամանած ինժեներն է, նա, ով պետք է մեր քաղաքի համար աղբյուր կառուցի:

Տիկնոջը ոտքի ելավ, բարեկեց հյուրին եւ սիրալիկ հրավիրեց նստելու:

-Մեծարգո Հայրապետ Ստեփանովիչ,- դիմեց հյուրը Կոլոտ աղային,- Թիֆլիսի քաղաքապետը, հարգելով Ձեր խնդրանքը, Ձեր քաղաքում աղբյուր կառուցելու համար, որպես ջրային ինժեներ ինձ ուղարկեց:

-Անչափ գոհ ու շնորհակալ եմ թե՛ պարոն քաղաքապետից, թե՛ ձեզանից:

Ադոն հարգալից ձեռքը դրեց կրծքին: Հետո խոսեց տիկնոջը՝ Դշխուհին.

-Շատ ուրախ եմք, շատ ուրախ: Սակայն, պարոն ինժեներ, կներեք, որ ուղղում եմ մտքում Ձեր խոսքի մեջ, ոչ թե աղբյուր, այլ աղբյուրներ:

-Այո-այո, պարոն ինժեներ, տիկինս նկատի ունի այն հանգամանքը, որ քաղաքի ամեն մի թաղի համար կառուցվի մեկական աղբյուր:

-Լավ-լավ,- խոսակցությունն ընդհատեց մասնագետը,- Ստեփանիչ, նախ պետք է ուսումնասիրել այն տեղանքը, որտեղից պետք է սկիզբ առնեն աղբյուրները, այսինքն՝ ակունքը կամ ջրային ավազանը:

Կես ժամից հետո չորս կառք՝ մարդկանցով լի, արդեն հասել էին «Խաչեր» կոչվող վայր: Բացի աղաներից՝ Կոլոտ աղայի ու ինժեների հետ եկել էին այդ տեղանքը լավ ճանաչող ու հասկացող մասնագետ ու բանիմաց մարդիկ: Նրանք ինժեներին ցույց տվեցին ջրի այն ակունքն ու ավազանը, որտեղից պետք է սկսեին աղբյուրների շինարարությունը: Կառքերով միասին շրջեցին այն փողոցները եւ նշեցին այն ճանապարհները, որտեղից պետք է սկսեին աղբյուրների շինարարությունը: Ժամը հինգն անցել էր, երբ աղան բոլորի հետ միասին տուն վերադարձավ:

Դրսում աղմուկ լսվեց: Ադոն կնոջ հետ դուրս եկավ պատշգամբ: Ժողովուրդը, որ հավաքվել էր գետափին, խմբվեցին աղայի տան շուրջը եւ ոգեւորված ողջունեցին:

որված ողջունեցին բարերար ամուսիններին: Նրանք լսել էին, որ Դշխուհու ցանկությամբ աղան որոշել է քաղաքն ապահովել խմելու ջրով: Եկել էին իրենց գոհունակությունը, շնորհակալությունն ու սրտի խոսքն ասելու այդ անչափ կարեւոր եւ բարի նախաձեռնության համար: Նրանց միջից մեկը, ով մեծ հեղինակություն էր վայելում, խոսեց բոլորի անունից եւ հավաստեց, որ քաղաքի, որ ժողովուրդը պատրաստ է իր լուծման նույնպես ներդնելու աղբյուրների շինարարությանը, աջակցել ինչպես եւ ինչով կարող է: Ադոն հիացած էր ժողովրդի ոգեւորվածությունից: Քիչ հետո ամուսինները ներս գնացին:

Ճաշկերույթը վերջացնելուց հետո բոլորն անցան հյուրասենյակ՝ գործնական խոսակցության: Սեղանին դրված թղթերի վրա ինժեները գծում էր քաղաքի նոր անցկացվելիք աղբյուրի գծապատկերը:

Ներողություն խնդրելով, որ մասնակցում է տղա-



մարդկանց գործերին՝ Դշխուհին խոսեց.

-Կներեք ինձ, պարոն ինժեներ, ոչ թե աղբյուրի, այլ աղբյուրների գծագիր:

Բոլորը մի պահ իրար նայեցին:

-Այո, սիրելի բարեկամներ, մեր ցանկությունն է ոչ թե միայն մեր դռանը ունենանք աղբյուր, այլ պետք է քաղաքի յուրաքանչյուր թաղամաս՝ Խաչեր, Տալիզ, Բանդի, Կալեր, ունենա իր աղբյուրը, մեկ աղբյուր էլ՝ կենտրոնում /հետագայում ժողովուրդն այն անվանեց ժամի/, մեկ աղբյուր էլ Տալիզ եւ Խաչեր թաղերի խաչմերուկում եւ մեկն էլ՝ մեր բակում: Յոթ աղբյուր, եզրափակեց տիրուհին իր խոսքը:

Բոլոր ներկա գտնվողները հիացած եւ զարմացած էին տիկնոջ խոսքերից: Ինժեները, թղթի վրա որոշ հաշվարկներ անելուց հետո, դիմեց աղային.

-Հայրապետ Ստեփանովիչ, այդ դեպքում ծախսերը անհամեմատ մեծ կլինեն:

-Ոչինչ, ոչինչ, վերջնահաշիվը ներկայացրեք,- դիմեց ինժեներին աղան: Ինժեները մեկ անգամ եւս ճշտեց իր հաշվարկները եւ հայտնեց, որ քաղաքի մի ծայրից մյուսը յոթ աղբյուր կառուցելու համար անհրաժեշտ է 2000 ռուբլի գումար ոսկով՝ չհաշված բանվորների աշխատանքը, որոնք պետք է փորեն ճանապարհները խողովակներն անցկացնելու համար, ինչպես նաեւ նրանց սննդի համար նախատեսված գումարը:

-Պարոն ինժեներ, համաձայն եմ,- ասաց աղան,- սակայն մի նկատառում՝ ժողովուրդը կօգնի մեզ հողային բոլոր աշխատանքներում առանց որեւէ նյութական ակնկալիքների, իսկ նրանց սննդի ծախսերը եւ ինքս կհոգան:

Աղան նայեց բոլորին, ապա՝ տիկնոջը.

-Դշխուհի, պարոն ինժեներին այժմ պետք է նախնական որոշ կանխավճար տանք:

Դշխուհին նստած տեղից վեր կացավ, արագ-արագ քայլերով գնաց իր ննջասենյակը եւ կարճ ժամանակ անց վերադարձավ՝ հետը բերելով եւ ամուսնուն հանձնելով 1000 ռուբլի գումար իր խնայողություններից: Աղան, տեսնելով, որ կինն այդ գումարը իր տնտեսած միջոցներից է հատկացնում աղբյուրների կառուցման համար, ուրախ բացականցեց:

/շարունակությունը՝ էջ 8-ում/

